

ճշգրիտ: Սակայն այս տեղը շատ քիչ համաձայն գտած են միջինդարեան պատմութիւններու հետ և սկսած են բլրին կողին վրայ փնտռել այր մը:

1699 ին, Ֆրանչիսկեան մը կը գրէ. «Կայիափայլի տունէն մենք հասանք այն այրը ուր կ'ըսեն թէ Պետրոս լացաւ իր մեղքին վրայ. ան շատ փոքր է. և քիչ մը քաղաքէն դուրս, Յովսափատի ձորին կողմը, Սելովամի մօտ, որ Ս. Գրոց մէջ անուանի է»: Վերջին դարերուն մէջ այլևայլ այրեր ցոյց կը արուին իբր Ս. Պետրոսի ապաշխարութեան այրը, բայց անոնք չեն յարմարիր պահանջներու միջին դարու վկայութիւններուն որ կը նկարագրեն թէ խորունկ խողոջ մը ուղղահայեացօրէն կը մխրձուի հողին մէջ եկեղեցւոյ յատակին տակ: Աւերակ պատերու, գուրբերու և զանազան մողայիքներու բաւելի մը մէջտեղը P. Germer-Durandի ձեռքով գտնուած այրը իր դիրքովը և ձևովը աւելի գոհացում կու տայ քան ուրիշ այր որ ցոյց կը արուի:» (Տե՛ս PP. Hugues Vincent et F. M. Abel, Jerusalem Nouvelle Բ. հատ. էջ 486-487, 490-491):

Այս աւերակ եկեղեցիին գետինը երբ 1882ին Աստուբսիոնիսդները ծախու առին, նոյն թուականէն սկսեալ պեղումներ կատարեցին և գետինն ամէնէն աւելի վերին խաւերն աւելի նոր թուականի մը, այսինքն արարական տիրապետութեան վերաբերեալ առարկաներ դուրս տուին, ինչպէս Աիւրապ մը, ապա բիւզանդական չրջանի շինուած եկեղեցւոյ մը մնացորդները երևան եկան. իսկ ամէնէն ստորին խաւը դուրս կու տար երբայական թուականի տուն մը, ազօրիք մը և ուրիշ զանազան առարկաներ: Բիւզանդական չրջանէն ելածներն ամէնէն ձօնն էին. մարմարեայ քանդակեալ խոյակները, կիսասիւնները, մողայիքները, տապանները և զանազան դիւտեր կը հաստատեն հնագրեան եկեղեցիի մը գոյութիւնը. հարիւրեակ մը բիւզանդական դրամներ գտնուած են գետնոյն պեղումներուն և մաքրութեան ժամանակ: Նոյն դրամները կը դասաւորուին այս կերպով. Ուորիոսէն (395), եւ Թէոդոս Բ.էն (408) մինչեւ Անաստաս (491) եւ Մօրիկ (582): Գտնուած առարկաներուն մէջ կը տեսնուին նաև ուխտի նուէր մատանի մը՝ որուն ձանակը (chaton) աքաղաղ մ'էր պղնձէ խնկաման մը և նշխարի կաղապար մը:

Հողէն հանուած այս բոլոր առարկաներուն մէջ քրիստոնէա-